

ՄԱՆԱՆԱ ԴԱՆԱԼՅԱՆ

ԿՈՄԻԿԱԿԱՆԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐԻՑ

Վերջին տասնամյակներում բանասիրության տարբեր հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների շրջանում հետաքրքրության զգալի աճ է նկատվում գեղագիտական կարևորագույն հասկացություններից մեկին՝ կոմիկականին¹ առնչվող խնդիրների ուսումնասիրության բնագավառում։ Կոմիկականի լեզվաոճական արտահայտչամիջոցների հիմնահարցերին նվիրված մասնագիտական աշխատանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտնականների մոտ միանշանակ մոտեցում գոյություն չունի կոմիզմի հիմնական տարատեսակների էության ու բնույթի ըմբռնման հարցում։ Այսպես, երբեմն բանասերներն անհարկի ընդլայնում են կոմիկականի հիմնական դրսևորումներից մեկի՝ հումորի իմաստային-բովանդակային շրջանակները՝ վերջինիս մեջ ներառելով նաև հեզմանքին բնորոշ լեզվական իրողություններ²։ Բազմաթիվ են նաև այն դեպքերը, երբ հետազոտողները կոմիկականի բովանդակությունը սահմանափակում են սոսկ հումորով ու սատիրայով, և այդ դեպքում անհասկանալի է մնում հեզմանքի գործառության դաշտը կոմիկականի տեսական համակարգում³։ Հանդիպում են նաև այնպիսի աշխատություններ, որոնց հեղինակները, փորձելով պարզաբանել կոմիկականի դրսևորումներից մեկի՝ սատիրայի արտահայտման լեզվաոճական առանձնահատկությունները, հստակ չափանիշներ չեն առաջադրում այն հումորից ու հեզմանքից սկզբունքորեն տարբերակելու համար⁴։ Նմանատիպ մեթոդաբանական անհետևողականություն է նկատվում նաև վերջին տասնամյակներում գիտնականների ուշադրության կիզակետում հայտված կոմիկականի մեկ այլ բաղադրատարրի՝ հեզմանքի ուսումնասիրությամբ զբաղվող բանասերների աշխատություններում։ Այստեղ նույնպես միանշանակ չեն սահմանազատվում հեզմանքն ու սատիրան, հեզմանքն ու հումորը⁵, որի պատճառով էլ անխուսափելի են թուրքմբռնումներն այս և հարակից հիմնախնդիրների հետազոտության ժամանակ։ Նման իրավիճակներից խուսափելու համար առաջին հերթին նպատակահարմար է որոշ հստակություն մտցնել այս հասկացությունների մեկնաբանման հարցում։

Կոմիկականի տարբեր հիմնահարցերի վերաբերյալ մասնագիտական գրականության համեմատական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ

"հումոր", "հեգմանք", "սատիրա" հասկացությունների ըմբռնման ժամանակ երբեմն ի հայտ եկող տարրըմբռնումների հիմնական պատճառը կոմիկականի տարբեր տարատեսակների հետազոտության ժամանակ միմյանցից էականորեն տարբերվող երկու ուրույն տեսական մոտեցումների՝ գեղագիտական-գրականագիտական և լեզվաոճաբանական դիրքորոշումների յուրօրինակությունների անտեսումն է։ Այսօր արդեն անհրաժեշտություն է առաջացել հետազոտության միևնույն օբյեկտի՝ կոմիկական երևույթների ուսումնասիրության ժամանակ միմյանցից սկզբունքորեն սահմանազատել (բայց ոչ հակադրել) երկու հարաբերականորեն ինքնուրույն գիտակարգերի՝ գրականագիտության և լեզվաբանության կողմից կիրառվող հասկացական ապարատները։

Ինչպես հայտնի է, գրականագիտությունն ու գեղագիտությունը կոմիկականին անդրադառնում են պատկերվող իրականության հանդեպ գրողի, արվեստագետի ունեցած վերաբերմունքի դիտանկյունից։ Լայն տարածում է ստացել այն տեսակետը, որի համաձայն երբ գրական ստեղծագործության հեղինակն իր հերոսին բնութագրում է ընդհանուր առմամբ դրական հատկանիշներով, օգտագործվում են հումորի ընծեռած հնարավորությունները։ Հակառակ դեպքում, երբ ստեղծագործության հերոսը բացասական է և հեղինակի կողմից անխնա քննադատության է ենթարկվում, ապա այս դեպքում գործ ունենք սատիրայի՝ խաթիջ ու ոչնչացնող քննադատության, մերկացնող ու մերժող կոմիզմի տարատեսակի հետ⁶։ Կոմիկականի տարատեսակներին նման կտրվածքով անդրադառնալու դեպքում հեգմանքին երկրորդական ու անանցյալ դեր է հատկացվում, այն միջանկյալ (և անորոշ) տեղ է գրավում սատիրայի ու հումորի միջև⁷։

Հեգմանքը, որպես կոմիկականի ուրույն երևույթ, համեմատաբար ավելի հանգամանակից ուշադրության է արժանանում այն բանասերների աշխատություններում, որոնք այն հետազոտում են լեզվի առնչմանակային իմաստավորումներում ոճական հնարների խաղացած դերի տեսանկյունից։ Նման ուսումնասիրություններում հեգմանքը դիտարկվում է որպես այնպիսի ոճական հնար, որի կիրառության արդյունքում լեզվական համապատասխան միավորը (բառը, բառակապակցությունը, նախադասությունը) ձեռք է բերում իր ուղիղ, անվանողական իմաստին հակադիր նշանակություն⁸։ Այսպիսի մեկնաբանության շնորհիվ կոմիկականի այս տարատեսակին ուրույն տեղ է հատկացվում հիմնական լեզվաոճական դարձույթների տեսական համակարգում, և այն դիտարկվում է որպես երկրորդական անվանողության միջոցով լեզվական միավորի փոխաբերական իմաստով գործածության մի մասնավոր դրսևորում։

Չիմնվելով վերջին տասնամյակներում բանասիրական մի շարք ուսումնասիրությունների արդյունքների վրա՝ կոմիկականի կառուցվածքային

ստորաբաժանումը կարելի է իրականացնել նոր սկզբունքներով՝ հենվելով, մասնավորապես լեզվաբանական եղանակավորման գաղափարի վրա: Եղանակավորման հիմնախնդիրը ժամանակին հանգամանալից վերլուծության է երթարկվել 4. Վիճորդաղովի ու նրա մի շարք հետևորդների կողմից, որոնք հիմնավորել են լեզվագիտական այդ երևույթի էության ըմբռնման կարևորությունը բանասիրական ուսումնասիրությունների համար:

Վ. Վիճորդաղովը եղանակավորումը սահմանել է որպես խոսողի կողմից իրականության նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորում՝ արտահայտված քերականական միջոցներով⁹: Առանձնացվում է երկու տեսակ եղանակավորում՝ օբյեկտիվ, որը ենթադրում է խոսողի կողմից իր իսկ ասույթի գնահատումը հավաստիության առումով, և սուբյեկտիվ, որն արտահայտում է խոսողի հուզական-զգացմունքային վերաբերմունքն իր կողմից արտաբերված լեզվական միավորների հանդեպ:

Այս երկուսից մեզ առավելապես հետաքրքրում է սուբյեկտիվ եղանակավորումը, որովհետև վերջինս, ինչպես իրավացիորեն նկատում է Ս. Պոխոդյան, թույլ է տալիս նորովի բնորոշել հեզմանքը՝ այն դիտարկելով որպես թաքնված, նեզատիվ բնույթ ունեցող սուբյեկտիվ-արժեքային եղանակավորման իրականացում¹⁰: Դա նշանակում է, որ հեզմանքի օգնությամբ խոսողը ոչ բացահայտ ձևով իր կոմիկական հուզական-զգացմունքային վերաբերմունքն է արտահայտում արտաբերվող ասույթի բովանդակության նկատմամբ:

Յիմնվելով հեզմանքի այսպիսի ըմբռնման վրա՝ լեզվաբանական ուսումնասիրության դիտանկյունից հումորը նույնպես կարել է բնորոշել որպես իրականության նկատմամբ ասույթի հեղինակի կոմիկական դիրքորոշում, բայց արդեն ոչ թե թաքնված, ներակա (implicit) ձևով, ինչպես նախորդ դեպքում, այլ անմիջականորեն, ուղղակի ձևային արտահայտման ճանապարհով՝ արտակա (explicit) ձևով: Ընդհանուր առմամբ կարելի է հաստատագրել, որ եթե հումորի դեպքում խոսողի կոմիկական վերաբերմունքի իմաստային և ձևային կողմերը համապատասխանում են իրար, ապա հեզմանքի իրականացման ժամանակ արտաբերվող լեզվական նշանների արտահայտման և բովանդակային պլաններն, ընդհակառակը, հակադրվում են միմյանց: Օբյեկտիվ եղանակավորման տեսանկյունից հումորն ու հեզմանքն ունեն միևնույն ուղղվածությունը՝ արտահայտելով խոսողի կոմիկական, ծաղրական վերաբերմունքը իրականության նկատմամբ, այնինչ նրանց սուբյեկտիվ եղանակավորման վեկտորները հակառակ են տեղաբաշխված:

Անշուշտ, վերը շարադրվածն ամենևին չի նշանակում, որ կոմիկականի ուսումնասիրման հարցում անջրպետներ գոյություն ունեն բանասիրական

երկու փոխկապակցված բաժինների՝ լեզվաբանության և գրականագիտության միջև. ընդհակառակը՝ հիշատակված երկու մոտեցումների հետազոտական արդյունքների համադրումը միայն կարող է հնարավորություն ընձեռել ավելի ամբողջական և ճշգրիտ պատկերացում կազմել ինչպես կոմիզմի տարբեր դրսևորումների առանձնահատկությունների, այնպես էլ դրանց արտահայտման կոնկրետ ձևային մեխանիզմների մասին:

Գրական տարբեր տեքստերում առկա զվարճալի պատկերների և կերպարների բանասիրական հիմքերի վերլուծության ժամանակ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ գեղարվեստական խոսքում ըստ արտահայտման եղանակի, կոմիկականը կարող է երկու կերպ դրսևորվել. առաջին՝ իրադրային կոմիզմի դեպքում ընթերցողին ծիծաղելի են թվում գրքում նկարագրվող զվարճալի դեպքերն ու անսովոր տեսարանները, իսկ մյուս՝ լեզվական կոմիզմի հիմքում ընկած են գործող անձանց կամ հեղինակի կողմից դիպուկ կիրառված ռեալական հնարներն ու խոսքին սրամտություն հաղորդող լեզվական կառույցները¹:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ եթե գրականագիտական ուսումնասիրության խնդիրների տեսանկյունից առավել հետաքրքրություն են ներկայացնում կոմիկականի հումորիստական և սատիրական ասպեկտների վերլուծությունը, ապա հիմնահարցի լեզվագիտական հատույթի հայեցակետից առաջնային նշանակություն է ստանում հումորիստական և հեզմական առնչանակային իմաստների արտահայտման նպատակով գործածվող լեզվաճական բազմապիսի հնարների ու միջոցների էության, նրանց գեղագիտական ներգործության առանձնահատկությունների գիտական հետազոտությունը: Այս երկու հարաբերականորեն ինքնուրույն բնագավառների ուսումնասիրության արդյունքների համադրումը թույլ կտա առավել ամբողջական ու համակարգված ձևով իրականացնել կոմիկականի բանասիրական հիմնահարցերի հետազոտությունը:

Ծ Ա Ն Ո Ւ Թ Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Կոմիկականը գեղագիտության առանցքային կատեգորիաներից է, որն արտացոլում է այն անհամապատասխանությունը, որը գոյություն ունի երևույթների, հասարակական սուբյեկտների արդեն հնացած կամ թերարժեք բովանդակության և արժեքավորի ու առաջադիմականի հավակնություններ դրսևորող նրանց ձևային կաղապարների միջև: Այդ անհամապատասխանության բացահայտումն ու ընկալումը, մասնավորապես՝ գեղարվեստական գրականություն ընթերցելիս, առաջ է բերում կոմիզմի զգացում, որը կարող է դրսևորվել ժպիտի կամ ծիծաղի ձևով. տե՛ս Карягин А.В. Комическое.// филологическая энциклопедия, т.2, М., 1976, сс.573-575:

2. Այսպես, Գ.Ուղովիչենկոն, վերլուծելով խորիդրային տարիներին ուկրաինական կատակերգության ժանրում տեղ գտած հումորիստական պատկերների կերտման առանձնահատկությունները, իր գիտական ուսումնասիրության մեջ նշանակալից տեղ է հատկացնում նաև հեզմանքին բնորոշ բազմաթիվ լեզվական երևույթների

վերլուծությանը (Удовиченко Г. Языковые средства юмора в украинской советской комедии: Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-Киев, 1952): Մերթաքաբանական նման կողմնորոշում ունի նաև Ս. Կուլինիչը (Кулинич М. А. Семантика, структура и прагматика англоязычного юмора: Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-М., 2000) :

3. Նման կերպ է վարվում, մասնավորապես, Զ. Նովիցկայան, որը Սարկ Տվենի երկերում կոմիզմի առանձնահատկություններին նվիրված իր ատենախոսության մեջ ընդհանրապես խուսափում է "հեգմանք" հասկացության գործածությունից, իսկ վերջինիս բնորոշ լեզվական առանձին իրողությունները փորձում է մեկնաբանել բացառապես հումորիստական և սատիրական տեսանկյունների շրջանակներում (Новицкая З. В. Традиции американского юмора XIX в. и речевые средства комического у М. Твена: Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-М., 1962):

4. Մասնավորապես Գ. Տրեմասովան անհարկի լայնացում է սատիրական իմաստի բովանդակային սահմանները՝ այնպես, որ վերջինիս մեջ անհասկանալիորեն տեղ են գտնում նաև լոկ հումորին վորաբերող առանձին լեզվական երևույթներ (Тремасова Г. Языковые средства выражения сатирического смысла(английская и амери-канская художественная литература и юбдлицастика: Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-М., 1979): Հասկանալի է, որ դրա արդյունքում միակողմանի է ներկայացվում հենց իր՝ սատիրայի գիտական բնութագրությունը, որովհետև հետազոտության մեջ իրար են միախառնվում հիմնահարցի լուսաբանման լեզվաոճական ու գրականագիտական ուսումնասիրության տեսանկյունները:

5. Այսպես, Մ. Բաղդասարյանն ու Ն. Սալիխովան, արժեքավոր դիտարկումներ կատարելով հեգմանքի եության, նրա արտահայտման լեզվաոճական միջոցների առանձնահատկությունների պարզաբանման ասպարեզում, միևնույն ժամանակ չեն քննում կոմիկականի տարբեր ձևերի՝ հումորի, հեգմանքի, սատիրայի զանազանման չափանիշները (Багдасарян М. А. Языковые средства выражения иронии в совр. Франц., эське., Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-М. 1969: Салихова Н.К. Языковая природа и функциональная характеристика стилистического приема иронии: Автореф. д.с.с. ...канд. филол. наук.-М. 1976):

6. Բավական տարածված այս տեսակերի մասին տե՛ս, օրինակ. Тумофеев А. Основы теории литературы.-М., 1966 "Сатира" // Эстетика. Словарь.-М., 1989, с. 307: Զրբաշյան էդ. Գրականության տեսություն, Ե., 1980: Այս տեսակետի հետևողական պաշտպաններից է կոմիկական երևույթների հայտնի տեսաբան Յու. Բորևը, որի կարծիքով կոմիզմի հիմնական դրսևորումները երկուսն են՝ հումորը և սատիրան: Վերջինս այն ամենի անսրող քննադատությունն է, ինչը չի համապատասխանում առաջադիմական գեղագիտական իդեալին և կանգնած է վերջինիս իրականացման ճանապարհին: Ի հակադրություն սատիրայի, հումորը կիրառվում է այն կերպարների հանդեպ, որոնք չեն հակադրվում գեղագիտական իդեալին, չեն խոչընդոտում նրա դրսևորմանը (Борев Ю. Комическое // Словарь литературоведческих терминов.-М. 1974, с. 146):

7. Կոմիկականի տարբեր տարատեսակների նկատմամբ նմանատիպ մոտեցում է դրսևորում, մասնավորապես, Պ. Կորեվան. տե՛ս Կоржева П. Б. Язык юмора и сатиры. - Алма-Ата, 1979):

8. Հեգմանքը նման ձևով է մեկնաբանվում ոճաբանության գրեթե բոլոր դասագրքերում ու ձեռնարկներում (տե՛ս, օրինակ. Томашевский Б. В. Стилистика.- Л., 1983: Шишкова Т. Н., Попок Х.К.- Л. Стилистика испанского языка - Минск, Вышеушая школа 1989: Брандес М. П. Стилистика ремесло языка.-М., 1990 և այլն):

9. Տե՛ս Виноградов В.В. О категории модальности и модальных словах русского языка // Труды института русского языка, М., 1950, с. 38-45:

10. Տե՛ս Походня С.И. Языковые виды и средства реализации иронии, Киев, 1989, с. 9:

11. Տե՛ս Поменцов Г. Г. Язык и юмор, Киев, 1974, с. 18: